

**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության ՓՔ վարչության ավագ փորձագետ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



**ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ  
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ**

Ցանկացած հափշտակություն բնութագրվում է **ուղղակի դիտավորությամբ**: Հանցավորը գիտակցում է, որ իր գործողությունների հետևանքով ուրիշի գույքն անցնում է իր տիրապետությանը և ցանկանում է այդ: Նա գիտակցում է նաև գույքին տիրանալու հակաօրինական ու անհատույց բնույթը: Դիտավորության բովանդակության մեջ է մտնում նաև հանցավորի կողմից հափշտակության ձևի գիտակցումը, իսկ համապատասխան դեպքերում նաև՝ որակյալ դարձնող հանգամանքի առկայությունը:

Հափշտակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի մյուս պարտադիր հատկանիշն է՝ **շահադիտական նպատակը**<sup>1</sup>:

Շահադիտական նպատակը (դրդապատճառը) քրեական իրավունքում դիտվում է որպես հափշտակության կատարման այն հնարավոր շարժառիթը, որով անձը ձգտում է հարստանալ<sup>2</sup>, որը, իրավաբանական գրականության մեջ, բնորոշվում է նաև հանցավորի ձգտումը՝ հարստանալ հափշտակված գույքի հաշվին՝ այն վերցնելով, իրենը դարձնելով կամ իր «հաշվին» հանձնելով այլ անձանց<sup>3</sup>:

Հափշտակություն չի կարող համարվել այն արարքը, որը հանցավորն իրականացնում է ոչ թե շահադիտական, այլ՝ գույքը ոչնչացնելու կամ վնասելու, կամ էլ՝ իր իրական կամ ենթադրվող իրավունքներն իրականացնելու նպատակով: Տվյալ դեպքում կատարված գործողություններն իրենցից ներկայացնում են ոչ թե հափշտակություն, այլ համապատասխանաբար որպես՝ ուրիշի գույքի ոչնչացում կամ վնասում, խուլիզանություն կամ ինքնիրավորություն: Շահադիտական շարժառիթներն արտահայտվում են նրանում, որ հանցավորը ձգտում է միջոցներ կորզել և հարստանալ ուրիշի գույքն, արժեքներն իր սեփականությունը դարձնելու միջոցով<sup>4</sup>: Շահադիտական շարժառիթը և նպատակը

հանդիսանում են հափշտակության հանցակազմի **պարտադիր հատկանիշները**:

Շահը, որպես հանցագործության կատարման շարժառիթ, հափշտակության հանցակազմի կառուցվածքում զբաղեցնում է առաջնային տեղերից մեկը: Այն ոչ միայն ամենատարածված, այլև՝ ամենահզոր դրդապատճառն է: Շահը ծագել է անձնական սեփականության առաջացման հետ մեկտեղ, պետության և դասակարգերի առաջացման հետ միասին, ու իբրև հարստանալուն միտված ձգտում, դարձել է մարդկային ակտիվ գործունեության խթան, մարդկային գործունեության և հարաբերությունների հիմնական չափանիշ: Շահը, որպես հանցագործության կատարման շարժառիթ ճանաչելով, նշանակում է, որ հանրորեն վտանգավոր արարքի կատարման դրդապատճառների հիմքում ընկած է որևէ նյութական **օգուտ կամ շահ ստանալու ձգտումը**: Հանցագործության կատարման ժամանակ այն կարող է արտահայտվել տարբեր ձևերով, մասնավորապես՝ կարող է կապված լինել նախ և առաջ որևէ գույք (նյութական արժեք, իր, դրամ, արժեքներ) կամ գույքի նկատմամբ իրավունք (օրինակ՝ ընդհանուր սեփականությունից բաժին, որևէ գույքի տիրանալու իրավունք և այլն) ձեռք բերելուն ուղղված ձգտումներով:

Սակայն ինչպիսի ձևերով էլ որ շահը դրսևորվի, միևնույն է, այն ուղղորդված է ապօրինի հարստանալուն, այլ անձանց հաշվին անօրինական ճանապարհով նյութական շահ ստանալուն և այլն: Բանի որ շահն իրենից ներկայացնում է այլ անձանց հաշվին անօրինական ճանապարհով հարստանալուն ուղղված ձգտում, ուստի միշտ ուղեկցվում է գույքային հարաբերությունների խախտումով, ուրիշ անձանց սեփականության իրավունքի նկատմամբ ռոնձգություն կատարելով և պարտադիր չէ, որ գույքը, որի հաշվին հանցավորը ձգտում է բավարարել իր շահադիտական ձգտումները:

www.lawinstitute.am

րը, պատկանելիս լինի տուժողին: Կարևորն այն է, որ հանցագործության կատարման արդյունքում որևէ նյութական **օգուտ կամ շահ ստացվի**<sup>5</sup>: Քրեական իրավունքի տեսության մեջ հանցագործության շարժառիթը հանցանք կատարելու որոշակի պահանջմունքներով պայմանավորված ներքին մղում է: Շարժառիթն այլ կերպ կարելի է բնութագրել որպես նպատակին հասնելու ցանկություն: Իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ նշվում է, թե շարժառիթը հանդես է գալիս որպես արարք կատարելուն ուղղված **գիտակցական մղում**, որը միշտ չէ այդպես: Այս առումով հոգեբանները և կրիմինոլոգները վաղուց ապացուցել են, որ մարդկային արարքների, այդ թվում և հանցագործության իրական շարժառիթները մեծ մասամբ ենթագիտակցական բնույթ ունեն և արարքի իրական շարժառիթը չի կարելի նույնացնել արարքը կատարողի կողմից իր գործողությունների պատճառների բացատրության հետ: Չի կարելի արարքի իրական պատճառների մասին պատկերացում կազմել միայն արարքի արտաքին հատկանիշների վերլուծության հիման վրա: Այսպես, հափշտակությունը մեծ մասամբ շահադիտական շարժառիթով է կատարվում, բայց զուտ այն փաստը, որ կատարվածը հափշտակություն է, դեռևս չի վկայում շահադիտական կամ, համեմայն դեպս, միայն շահադիտական շարժառիթի առկայության մասին: Հաճախ հափշտակությունները կատարվում են այլ, առավել էական, իմաստային և խոր շարժառիթներով: Մասնավորապես, անչափահասները հաճախ գողություն, կողոպուտ կամ ավազակություն են կատարում ոչ այնքան իրենց նյութական կարիքները բավարարելու համար, որքան արկածախնդրության, ինքնահաստատման, անչափահասների շրջապատում (ռեֆերենդային խումբ) ուրույն տեղ գրավելու շարժառիթներով և այլն: Նույնիսկ չափահաս անձանց կողմից հափշտակությունների կամ այլ շահադիտական հանցագործությունների կատարումը հաճախ պայմանավորված է ոչ այնքան նյութական, շահադիտական շարժառիթներով, որքան ինքնահաստատման, իրենց սոցիալական կարգավիճակը պահպանելու կամ ցանկալի սոցիալական կարգավիճակ ձեռք բերելու շարժառիթներով<sup>6</sup>:

**Հանցագործության նպատակն** այն ապագա ցանկալի վիճակի մասին պատկերացումն է, որին ձգտում է հասնել անձը: Նպատակը ցույց է տալիս, թե ինչի համար է կատարվել արարքը, ինչի

էր ձգտում հասնել անձը: Հանցագործության նպատակը ձևավորվում է շարժառիթի հիմքի վրա, բայց եթե շարժառիթը մեծ մասամբ ենթագիտակցական է կամ ամբողջությամբ չի ընկալվում, ապա նպատակը **գիտակցված մղում է**: Շարժառիթը և նպատակը թեև փոխապայմանավորված երևույթներ են, սակայն բնութագրում են կամային գործընթացի տարբեր կողմերը: Շարժառիթը պատասխանում է այն հարցին, թե մարդն ինչու է կատարում այս կամ այն գործողությունները, նպատակը որոշում է գործողության ուղղությունը<sup>7</sup>:

Հանցագործության շարժառիթի և նպատակի հստակ սահմանազատման բացակայության պատճառով, երբեմն որոշակի դժվարություններ են առաջանում հանցագործության սուբյեկտիվ կողմի պարզաբանման հարցում: Իրավաբանական գրականության մեջ չկա միասնական մոտեցում հափշտակության նպատակի վերաբերյալ, մասնավորապես այն մասին, թե արդյոք այդ նպատակը միշտ շահադիտական է, թե՛ ոչ: Հեղինակների մի մասը շահադիտական նպատակը դիտարկելով որպես հափշտակության **հատուկ նպատակ**, նրանում տեսնում են հափշտակությունն այլ տեսակի հանցագործություններից սահմանազատող յուրօրինակ չափանիշ<sup>8</sup>:

Բոլոր դեպքերում հանցագործության շարժառիթի և նպատակի հստակ որոշումը հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու արարքի հանցակազմը նախատեսող քրեաիրավական նորմը: Սակայն դատական պրակտիկայում դեռևս շարունակում են հանդիպել արարքի սխալ քրեաիրավական որակման այնպիսի դեպքեր, երբ հանցավորի արարքը սխալմամբ որակվել է կամ հափշտակություն, կամ էլ՝ ընդհանրապես քրեական գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով<sup>9</sup>:

Հափշտակությունները բաժանվում են **ձևերի** և **տեսակների**: Հափշտակությունների բաժանումը ըստ **ձևերի** կատարվում է քրեական օրենքով նախատեսված այնպիսի հիմնավորմամբ, ինչպիսիք են հափշտակությունների կատարման առավել ընդհանուր և տիպիկ եղանակները, իսկ ըստ **տեսակների** բաժանման հիմքում ընկած է հափշտակության չափը, որի որոշման հիմքում թերևս ընկած են որոշակի առանձնահատկություններ: Նախկինում, թե՛ դասագրքերում և թե՛ մենագրություններում, հափշտակության չափը ընդուն-

ված էր բաժանել տեսակների: Գա պայմանավորված էր նրանով, որ պետական և հանրային գույքի մանր և առանձնապես խոշոր չափերի հափշտակությունները որոշվում էին հատուկ քրեաիրավական նորմերով: Սակայն ՀՀ նոր քրեական օրենսգիրքն այդպիսի նորմեր չի պարունակում և հափշտակության չափը առանձին հանցակազմերում հաշվի է առնվում միայն որպես արարքը որակյալ դարձնող հատկանիշ: Այդ իսկ պատճառով հափշտակության նման դասակարգումը նոր քրեական օրենսգրքի համար կորցրել է իր ինքնուրույն քրեաիրավական նշանակությունը:

**Հափշտակության ձևերը՝** դրանք քրեական օրենքով նախատեսված, միմյանցից տիպիկ տարբերվող հափշտակությունների կատարման առավել ընդհանուր եղանակներն են: ՀՀ քր. օր-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլուխն առանձնացնում է հափշտակությունների կատարման հետևյալ ձևերը՝ ավազակություն (175 հոդված), կողոպուտ (176 հոդված), գողություն (177 հոդված), խարդախություն (178 հոդված), յուրացում կամ վատնում (179 հոդված):

Քրեական իրավունքի տեսության մեջ կարծիքներ են արտահայտվել այն մասին, որ ավազակությունը չի հանդիսանում հափշտակության ձև և որպես այդպիսին պետք է ընդունել **շորթումը**: Սակայն նման կարծիքները բավարար չափով պատճառաբանված չեն և չեն բխում օրենքի ուղղակի պահանջներից: Իրավաբանական գրականության մեջ այս հանցակազմի վերաբերյալ բերված են տարբեր մոտեցումներ, որոնք միանշանակ այն կարծիքն են պնդում, թե շորթումը չի կարող հանդիսանալ հափշտակության ձև, չնայած այն հանգամանքին, որ վերջինս օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով սերտ առնչություն ունի հափշտակության ձևերի հետ: Շորթումը, ինչպես բռնությամբ գուցորդված կողոպուտը և ավազակությունը, հանդիսանում են **երկօբյեկտ հանցագործություններ**: Շորթման հանցակազմի առանձնահատկությունն այն է, որ այն ունի նաև սեփականության հարաբերությունների, այլև՝ այլ գույքային հարաբերությունների դեմ, որոնք հանդես են գալիս իբրև գույքային շահերն արտահայտող ինքնուրույն ձևեր (պարտավորական, ժառանգական, բնակարանային և այլն): Որպես լրացուցիչ օբյեկտ հանդես է գալիս անձի պատիվն ու արժանապատվությունը, իսկ արարքի որակյալ տեսակներում՝

անձի առողջությունը, այսինքն՝ ունեցելով սեփականության՝ որպես քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող հիմնական օբյեկտի դեմ, այն ուղղված է նաև անձի դեմ:

Ըստ էության, շորթումն իր մեջ ներառում է հետևյալ պահանջները՝ 1) ուրիշի գույքի հանձնում, 2) ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի հանձնում, 3) գույքային բնույթի այլ գործողությունների կատարում: Վերջին դեպքում գույքը հափշտակության առարկա չի հանդիսանում, որն էլ, որոշ իրավաբանների կարծիքով, թույլ չի տալիս որպեսզի շորթումը լիարժեք համարվի հափշտակության ձև: Սակայն առաջին երկու դեպքերը՝ շորթման միջոցով գույքին տիրանալու գործողությունները, իրենց մեջ ներառում են հափշտակության բոլոր հատկանիշները: Այդ իսկ պատճառով, վերջին ժամանակներս, իրավաբանական գրականության մեջ տեսակետ էր արտահայտվել այն մասին, որ վերևում բերված փաստարկների մեջ առկա են բոլոր հիմքերը եզրակացնելու, որ գույքի այդպիսի շորթումը համարվի **հափշտակության ինքնուրույն եղանակ**<sup>10</sup>:

Հարկ է նշել, որ ՌՍՖՍՀ 1922 և 1926թթ. քրեական օրենսգրքերում հափշտակությունները, որպես առանձին խումբ, չէին առանձնացվում: ՍՀՄ Գերագույն որիդի նախագահության 1947թ. մայիսի 4-ի հրամանագրով, որը վերաբերում էր՝ «Պետական կամ հանրային ունեցվածքի հափշտակության համար քրեական պատասխանատվությանը», «այլ հափշտակություն» տերմինն իր մեջ ներառում էր գույքին տիրանալու ցանկացած եղանակ՝ չբացառելով նաև «շորթումը», որն այդ ժամանակաշրջանում տեսության մեջ առարկությունների չհանդիպեց: Այդ տեսակետը պահպանվեց նաև 1960թ. քր. օր-ը ընդունելուց հետո: 1960թ. քր. օր-ի առաջին մեկնաբանությունների մեջ շորթումը դիտվում էր որպես **հափշտակության ինքնուրույն ձև**: Սակայն հետագայում ձևավորվեց մեկ այլ տեսակետ, համաձայն որի շորթումը դիտվում էր ոչ թե հափշտակության ինքնուրույն եղանակ, այլ դասվում էր սեփականության դեմ ուղղված այն ունեցողությունների շարքին, որոնք «հարակից» էին հափշտակություններին և նույնիսկ «չէին առնչվում հափշտակություններին», որն իբրև տեսակետ իր արտացոլումը գտավ քրեական իրավունքի դասագրքերի մեջ: Այս տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ շորթման միջոցով գույքը փաստացի ստանալը դուրս է տվյալ հանցա-

կազմի շրջանակներից և պետք է դիտվի որպես ինքնուրույն հանցակազմ: Սակայն այն դեպքում, երբ սուբյեկտին հաջողվել է ստանալ պահանջվող գույքը, ապա նրա գործողություններում առկա են հափշտակության բոլոր հատկանիշները: Այդ իսկ պատճառով, գույքին փաստացի տիրանալու դեպքում արարքը որևէ լրացուցիչ որակման կարիք չունի:

Վերոնշյալ հանգամանքների հետ կապված՝ շորթման հանցակազմը հափշտակության ձևերի մեջ դասակարգելուն վերաբերող խնդիրը դեռևս մնում է վիճարկելի և մի շարք հեղինակներ այն կարծիքին են, որ շորթման հանցակազմը պետք է ամբողջությամբ ընդգրկել հափշտակությունների մեջ՝ որպես հափշտակության **հավասարագոր և ինքնուրույն ձև**<sup>11</sup>: Այլ հարց են շորթման հանցակազմի առարկայի վերաբերյալ արտահայտած տեսակետները, որոնց ճնշող մեծամասնությունը, ինչպես քրեական օրենքն է նշում, որպես հանցագործության առարկա ընդունում են՝ 1) գույքը, 2) գույքի նկատմամբ իրավունքը և 3) գույքային բնույթի գործողությունները, որոնք տուժողը պետք է իրականացնի շորթողի պահանջով, նրա օգտին<sup>12</sup>, իսկ գրականության մեջ տեղ գտած մեկ այլ տեսակետի համաձայն՝ «Շորթման հանցակազմի առարկա կարող են լինել միայն ուրիշի գույքը և գույքի նկատմամբ իրավունքը»<sup>13</sup>: Ինչպես նշում է հեղինակներից մեկը՝ գույքային բնույթի գործողությունների կատարման պահանջն առանձին հանցագործություն է և այն նորմը, որը պատասխանատվություն է նախատեսում նշված արարքի համար, պետք է տեղադրվի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ հափշ-

տակություններից և խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմներից հետո<sup>14</sup>, ինչը և կարելի է համարել նշված խնդրին ավելի մոտ կանգնած և լուծում առաջադրող տեսակետ:

Կախված հափշտակության չափից, ՀՀ քր. օր-ի 175 հոդվածի չորրորդ մասը սահմանում է գույքի հափշտակության հետևյալ չափերը՝ 1) **մանր չափ** է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), 2) **զգալի չափ** է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), 3) **խոշոր չափ** է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), 4) **առանձնապես խոշոր չափ** է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Հափշտակված գույքի չափի որոշման հիմնական չափանիշը պատճառված վնասի չափն է, որը հանդիսանում է արարքի հանրային վտանգավորության աստիճանը որոշող հիմնական չափանիշը: Որքան մեծ է հափշտակված գույքի արժեքը, այնքան ավելի մեծ քանակությամբ գույք է վերցված, հետևաբար էլ՝ նույնքան ավելի մեծ է տուժողին պատճառված վնասը<sup>15</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Бюллетень Верховного Суда СССР, 1987г. № 6. С. 11-12.

<sup>2</sup> Տե՛ս „Юридический энциклопедический словарь”. М. 1987г. С. 194.

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», (հատուկ մաս), ԵՊՀ, Եր., 2009 թ., էջ 373:

<sup>4</sup> Տե՛ս Թովմասյան Ա. Թ. «Սովետական քրեական իրավունք», (հատուկ մաս, 4-րդ հատոր), Եր., 1983 թ., էջ 42:

<sup>5</sup> Տե՛ս Волков Б. С. „Мотивы преступлений”. Изд-во Казанского университета, 1982г. С. 42, 45-46.

<sup>6</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք» /ընդհանուր մաս/, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Եր., 2000 թ., էջ 227-228:

<sup>7</sup> Տե՛ս Գրիգորյան Մ. Վ. «Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում», Եր., 2001 թ., էջ 179:

<sup>8</sup> Տե՛ս Волков Б. С. „Проблема воли и уголовная ответственность”. Изд-во Казанского университета, 1965г. С.85-87.

<sup>9</sup> Տե՛ս Бюллетень Верховного Суда СССР, 1990г. № 2. С. 15; Бюллетень Верховного Суда СССР, 1989г. №2. С. 32-34;

Бюллетень Верховного Суда СССР, 1989г. № 5. С. 33-36; Бюллетень Верховного Суда СССР, 1988г. № 2. С. 27-28; Бюллетень Верховного Суда СССР, 1988г. № 3. С. 14-15; 32-33, Бюллетень Верховного Суда СССР, 1988г. № 5. С. 13-15; Бюллетень Верховного Суда СССР, 1987г. № 1. С. 22-24; Бюллетень Верховного Суда СССР, 1987г. № 2. С. 19-22; Бюллетень Верховного Суда СССР, 1987г. № 3. С. 20-22; Бюллетень Верховного суда СССР, 1987г. № 4. С. 19-22; Бюллетень Верховного Суда СССР, 1987г. № 5. С. 12-13; Бюллетень Верховного суда СССР, 1986г. № 1. С. 24-25; Бюллетень Верховного Суда СССР, 1986г. № 2. С. 28-30; Бюллетень Верховного суда СССР, 1986г. № 5. С. 33-36; Бюллетень Верховного Суда СССР, 1986г. № 6. С. 35-37; Бюллетень Верховного суда СССР, 1985г. № 2. С. 20-21; Бюллетень Верховного Суда СССР, 1976г. № 1. С. 26-28; Бюллетень Верховного суда СССР, 1974г. № 4. С. 14-17, 24-25; Бюллетень Верховного Суда СССР, 1973г. № 6. С. 23-25; Бюллетень Верховного суда СССР, 1972г. № 3. С. 17-21; Бюллетень Верховного Суда СССР, 1971г. № 5. С. 31-33, «Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի որոշումների ժողովածու III /2001թ./», Երևան – 2002թ., էջ 23-26, 116-118, 308-310, 509-512, «Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի որոշումների ժողովածու I /1999-2000թթ./», Եր., 2002թ., էջ 7-10, 14-18, 19-20, 23-24, 68-73, 294-297, 375-376, 411-418, 429-431, 473-479, 500-502, 541-543, 592-601, «Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի որոշումների ժողովածու II /2000-2001թթ./», Եր., 2002թ., էջ 46-51, 241-245, 446-447, 492-493, 506-508, 522-526, 531-533 և այլն:

<sup>10</sup> Տե՛ս «Курс уголовного права». В пяти томах, особенная часть, том 3 /под редакцией доктора юридических наук, профессора Борзенкова Г. Н. и доктора юридических наук, профессора Комиссарова В. С./ М., Зерцало - М. 2002г. С. 455.

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 455-457:

<sup>12</sup> Տե՛ս «Российское уголовное право» /особенная часть/, учебник, под ред. доктора юридических наук Журавлева М. П. и кандидата юридических наук Никулина С. И. Издательство „Спарк”. М. 1998г. С. 156. „Уголовное право России” /особенная часть/, учебник, под ред. профессора Рарога А. И., 2-е издание. М., 1997г. С.132;

„Комментарий к уголовному кодексу Российской Федерации” /под общей редакцией доктора юридических наук, Председателя Верховного Суда РФ Лебедева В.М. и док. юрид. наук, профессора Скуратова Ю. И./ Издательство НОРМА. М. 2002г. С. 402; „Комментарий к уголовному кодексу Российской Федерации” /Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики/. ЭКЗАМЕН. М. 2002г. С. 336; „Уголовное право” /особенная часть/, учебник для вузов, издательская группа НОРМА–ИНФРА-М. М. 1998г. С. 240;

„Российское уголовное право” /особенная часть/, учебник, под ред. академика Кудрявцева В. Н. и доктора юридических наук, профессора Наумова А. В. Юристь. М. 1997г. С. 163 և այլն:

<sup>13</sup> Տե՛ս «Уголовное право» /особенная часть/, учебник для вузов, издательство НОРМА. М. 2001г. С. 313.

<sup>14</sup> Տե՛ս Сафонов В. Н. „Организованное вымогательство” /уголовно-правовой и криминологический анализ/. Санкт-Петербург. 2000г. С. 79.

<sup>15</sup> Տե՛ս Чинхоев Ш. И. „Квалификация хищений государственного и общественного имущества в особо крупных размерах”. Изд-во „НАУКА” Казахской ССР. Алма-Ата. 1983г. С. 95-96.